պրութեան ընդունած միջոցների շնորհով, Բերլինի դաշնագրութեան մէջ չը կայ մի որոշում, որով թոյլ տրվեր բոլոր պետութիւններին, համաձայնութեամբ վերահասկել դաշնագրի ձիշդ իրագործելու վրա: Այդ տեսակ որոշումն պահանջում էին Գերմանիան, Ռուսաստանը և Աւստրիան, իսկ Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան ընդդէմ էին այդ որոշմանը: Բայց դաշնագրի 61—որդ յօդուածը աչքի առաջն ունի որ բոլոր պետութիւնները կարող են վերահսկել այդ վերանորոգութիւնների մասին, միայն թէ իւրաքանչիւրը նոցանից պէտք է առանձնապէս միջամտի: Եթէ կան արդելքներ, աւելացրեց հերցոգ Արզայլ, այդ արդելքները պէտք է վերաբերել Նախկին միներատրութեան քաղաքականութեանը, և այժմեան ընդդիմադրական կուսակցութեանը, որ իր ձաներով աւելի է խանգարում գործը:

ԹՈՒՐՔԻԱ

—

«Polit. Corresp.» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից:

Վերջապէս Սայիդ-փաշան համաձայնվեցաւ վերանորոգութիւնների մանաժողովի համար անդամներ նշանակել: Իրադէն այդ գործի մասին ստորագրվեցաւ մայիսի 29-ին և, ինչպէս ասվում էր, նշանակվեցան անդամներ Ասսիմ-փաշա և Արրաս-էֆէնդին, որոնց արժանաւորութիւնը արդէն յայտնի է Արևելեան Ռումելիայի գործերը կարգադրող եւրոպական մանաժողովին: Ասիմ-փաշա թիւրք է, իսկ Արրաս-էֆէնդին հայ: Սայիդ-փաշա խոստացել է, որ այդ մանաժողովը կը հաւաքվի մի շաբաթվայ ընթացքում և կը սկսի իր ահագին աշխատանքները, որոնք գոնեա մի քանի ամիսներ կը տևեն: Նատ կարելի է, որ վերանորոգութիւնների նախագիծը մշակուց յետոյ, անկարելի լինի նրան իրագործել, որովհետև վերջին ժամանակներում անցքերը շատ շուտ շուտ են փոփոխվում: Պ. Պոշնն կընդունվի սուլթանից յունիսի 2-ին, կամ 3-ին (յայտնի է, որ այդ ընդունելութիւնը արդէն կայացել է): Նախկին միներատրների գործածած կարգի համեմատ մի դեսպան ընդունվում էր սուլթանից Կ. Պոլիս հասնելուց հինգ օր յետոյ, բայց Աբդուլ-Համիդ երբեք չէր հետևում այդ կարգին, այնպէս որ այս դէպքում պ. Պոշնին ընդունելութիւնը երիտասարդ փաշէշահի կամքից է կախված: Արդուլ-Համիդ բոլորովին տրամադրված չէ ընդունել անգլիական նոր դեսպանին, որովհետև նրան համարում է մի դատաւոր, որ եկել է սուլթանից անցեալի համար հաշիւ պահանջելու և ապագայի համար նրան հրամաններ տալու: Այդ երիւզով է մեկնվում այն փաստը, որ սուլթանը յետաձգեց պ. Պոշնի ընդունելութիւնը: Մայիսի 29-ին սուլթանը ընդունեց պ. Լայարդին և նրա հետ երկար ժամանակ խոսակցում էր: Այդ խոսակցութենից յետոյ նախկին դեսպանը հրաւիրվեցաւ սուլթանի սեղանին և ստացաւ համակրութեան այնպիսի ցուցմունքներ, որոնք Լայարդին անգամ զարմացրին, որովհետև առաջ սուլթանը դէպի նրան ուրիշ կերպ էր վերաբերվում: Թիւրքաց դեսպանը Լոնդոնում Մուսուրուս-փաշա Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ երկու անգամ ընդունվել է սուլթանից: Մի քանիսը պնդում են, որ նա խորհուրդ է տուել սուլթանին փոփոխել այժմեան միներատրութիւնը: Նա մինչև անգամ ասել է, որ անգլիական թագուհին այդ բանը ցանկանում է: Այս վերջին տեղեկութիւնը բաւական կասկածաւոր է: Այսպեղ լուր է տարածված, որ Մուսուրուս-փաշա կարող է արտաքին գործերի միներատր նշանակվել, բայց այդ ընտրութիւնը բոլոր պետութիւններին հաճելի չի լինի: Մուսուրուս-փաշա երկար ժամանակ խոսակցեց Սայիդ և Սավաս փաշաների հետ և այդ խոսակցութիւններով ծանօթացրեց նրանց անգլիական կառավարութեան ցանկութիւնների և հայեացքների հետ: Դեսպանների զրուցիները, որ արդէն խմբագրվում է, շուտով կը լայնվի ում հարկն է: Բաւական դժուար է այդ զրուցեան հետևանքները նախագուշակել: Նատ բան կախված է պետութիւնների համաձայնութենից և իւրաքանչիւր առանձին պետութեան ներայայացուցչի եռանդից: Այն քաղաքագէտները, որոնք միջոց ունեցան տեսնվել և խոսել պ. Գոշնի հետ, նրան չափազանց խելացի և մի և նոյն ժամանակ հաշտ ընաւորութեան տէր մարդ են համարում: Դրանից չէ կարելի եզրակացնել, որ նա եռանդի պակասութիւն ունի, բայց նա մի և նոյն ժամանակ հաստատ, զգոյշ և խոհեմ մարդ է և այդ յատկութիւնները մեծ արժանաւորութիւն են մի քաղաքագէտ մարդու համար: Նրա ազգային ինքնասիրութիւնը վիրաւորվեցաւ, երբ նրան թարգմանեցին թիւրքաց լրագրներից մի քանի ծաղրական յօդուածներ թէ իր կառավարութեան և թէ իր մասին: Դեսպանատանը մի քանի մոտ անձինք նրան խորհուրդ էին տալիս զանգատվել Բ. Դրանը թիւրքաց լրագրների անվայել վարմունքի դէմ: Այդ խորհուրդը պ. Գոշնն միայն մասամբ ընդունեց. իր խոսակցութեան ժամանակ Սավաս-փաշայի հետ նա մինիստրի ուշադրութիւնը դարձրեց թիւրքաց լրագրների մի քանի յօդուածների վրա, որոնք զրգռում են մահմեդականների ֆանատիկոսութիւնը, բայց իր վրա արած ծաղրերի վերաբերութեամբ նա ոչինչ չասիարեց: Այդ անգոյշ յօդուածներից մի քանիսը բոլոր դեսպանների ուշադրութիւնը իրանց վրա դարձրին: Աւստրո-ունգարական դեսպանատունը զանգատվեց կառավարութեանը, որ թիւրքաց այրանցիները անվայել կերպով վարվում են կաթոլիկների հետ: Դեսկօվարում և Պրիզրենդում: Սավաս-փաշա այդ զանգատին պատասխանել է, որ չարաղդաբնեռից մի քանիսը արդէն կալանաւորված են: Ցոյս կայ, որ դրանք կը պատժվին: Մեսսոպոտամիայի ապստամբութիւնը վտանգաւոր է դառնում և նորերում կառավարութիւնը Բաղդադից շատ երիտասարդ լուրեր ստացաւ: Թիւրքաց չորս բատալիոն զօրքեր շրջապատվել են և ամբողջապէս ջարդվել ապստամբներից: Ասում են, որ սուլթանը ապստամբների առաջնորդին և նրա ընկերներին նեռում, պաշտօններ և շքանշաններ խոստացաւ, բայց այդ առաջարկութիւնը արաբերը արհամարհանքով մերժեցին: Ինչպէս երևում է արաբական ամբողջ տարրը կամենում է դուրս գալ սուլթանի հպատակութենից: Բաղդադի մէջ ապստամբներին ընդդիմադրելու համար մեծ քանակութեամբ թիւրքաց զօրքեր են կենտրոնանում:

ԲԵՐԼԻՆԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

—

Օրերումս գերմանական դեսպանները եւրոպական բոլոր պետութիւնների մոտ դիմեցին կառավարութիւններին հետևեալ հրաւիրագրով, յայտնելով, որ յունիսի 4-ին Բերլինում լինելու է դեսպանների կոնֆերենցիա:

«Նորին մեծութիւն գերմանական կայսրի և պրուսական թագաւորի կառավարութիւնը ծանօթացաւ այն հաղորդութեան հետ, որով Նորին մեծութիւն անգլիական թագուհու արտաքին գործերի քարտուղարը դիմեց գերմանական կառավարութեանը յունայ սահմանական խնդրի վերաբերութեամբ: Որովհետև այդ հաղորդութիւնը եւրոպական բոլոր կառավարութիւններից լաւ ընդունելութիւն գտաւ, այդ պատճառով գերմանական կայսրի կառավարութիւնը, Բերլինի դաշնագրով որոշած ընդհանուր գործը վերջացնելու և ամբողջացնելու ցանկութեամբ, պատիւ ունի առաջարկել պետութիւններին այն միջնորդութիւնը, որ որոշված է Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածով: Թող պետութիւնները բարեհաճեն յանձնել իրանց դեսպաններին, որ նրանք յունիսի 4-ին ներկայ գտնվին կոնֆերենցիային Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածով որոշված հարցը քննելու համար:»

Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածը հետևեալն է:

«Եթէ Բ. Դուռը և Ցունաստանը չը համաձայնվին սահմանները ուղղելու հարցի վերաբերութեամբ, որ որոշված է դաշնագրի 13-դ յօդուածով, Գերմանիա, Աւստրո-Ունգարիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա և Ռուսաստան իրաւունք ունեն առաջարկել իրանց միջնորդութիւնը բանակցութիւնները հեշտացնելու համար:»

Կոնֆերենցիային կը մասնակցեն Բերլինի դաշնագիրը ստորագրող վեց պետութիւնների ներկայացուցիչները: Ինչպէս երևում է գերմանական կառավարութեան հրաւիրագրից, պետութիւնները առանձին հաւատարմատարներ չեն ուղարկի Բերլին, այլ կը յանձնեն իրանց դեսպաններին ներկայ գտնվել կոնֆերենցիային: Կոնֆերենցիան իրաւունք կունենայ զբաղվել միայն յունական սահմանական խնդրով: Նա չէ կարող քննել ոչ Արևելեան-Ռումելիան Բոլգարիայի հետ միացնելու և ոչ անկախ Հայաստան ստեղծելու խնդիրները, մի խոսքով կոնֆերենցիան չէ կարող քննել ոչ մի հարց, որ չէ վերաբերում Թուրք-յունական սահմանին:

Փարիզից հեռագրում են հետևեալ տեղեկութիւնները Բերլինի կոնֆերենցիայի մասին: Թիւրքիայի և Ցունաստանի ներկայացուցիչները ներկայ կը լինեն կոնֆերենցիային, միայն խորհրդակցելու ձայնի իրաւունքով: Անգլիան և Ֆրանսիան պայմանագրվել են, որ Թիւրքիան Ցունաստանին ամենաքիչը այնքան զիջումներ անի, որքան որոշել է Բերլինի դաշնագրի 13-դ յօդուածը: Այդպիսով զիջումները անկարելի է քչացնել, մինչդեռ նրանք կարող են շատանալ: Գերմանիան համաձայն է Ֆրանս-անգլիական հայեացքի հետ, Ռուսաստանի կողմից ընդդիմութիւն չէ նախատեսվում: Աւստրիայի վերաբերութեամբ յունական կառավարութիւնը յոյս ունի, որ նա կը միանայ Գերմանիայի հետ: Վիրեը կը կայանայ ոչ թէ միաձայն, այլ ձայների առաւելութեամբ: Այդ պատճառով համոզված են, որ կոնֆերենցիան կընդունի Ֆրանս-անգլիական առաջարկութիւնները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՑԻՑ

—

Վան, մայիսի 21/2 յունիսի

Թէպէտ արմաֆները և քանջարեղէնները շատ լաւ վիճակի մէջ են առ այժմ և այս տարին շատ պտղաբեր կերևի, բայց սով և թշուառութիւն կը շարունակին դեռ իւրեանց սոսկալի երևոյթներով. Այժմ չքաւորներու և կարօտներու թիւը աւելի շատցած է քան թէ երկու կամ մէկ ամիս յառաջ, երբ սովը աւելի սարսափելի եղած էր. նոքա ողբ 2—3 ամսուան համար ուտելիք ունէին, նոքա ալ սպառեցին իրենց պաչարը. քիչ շատ դրամ, բայց հաց չուտեցողն ալ իբր փողերը սպառեց. ով այսուհետև դրամ չունի որ գնէ. մի ժամանակ մահին դէմ կռուել կը մտածէր ամեն մարդ, այժմ պէտք է կռուել աղքատութիւնի դէմ որ կը տանի դէպի թշուառութիւն և մահ. մի ժամանակ թէ փող ալ տային, չէր կարելի ցորեն գնել, այժմ թէև քիչ թէ շատ ցորեն կը գտնուի հրապարակին վրա, բայց դրամ չէ մնացած որ ամեն մարդ ցորեն գնէ. ինչպէս կերևի, այս վերջին օրեր նուիրատուութիւններն ալ այնչափ եռանդով չեն շարունակուիր որչափ ի սկզբան, որով թշուառութիւն աւելի պիտի ծանրանայ ժողովրդին վրա. կարծեմ թէ հազիւ 7000 բուրլի պատրաստ դրամ կայ այժմ Վանի մասնաժողովին մոտ որ այս օրեր եղեռնը կը գնէ հողագործ գիւղացիներուն բաժանելու համար, ես պիտի այնքատիմ որ այսուհետի մասնաժողովի հայրենասիրութեան վրա մի գաղափար տամ ձեզ այս առաջիկայ փաստով: Թէև Վանի մէջ հիւանդութիւն չերևիր, բայց Ազրակ (Բաչկալա) գաւառին մէջ որ Վանէն 2 օր հեռի է դէպի արևելեան կողմ, Թուրքապարսկական սահմանները, թանչի (տիսանդրի) նման մի հիւանդութիւն սկսած է ճարակուիլ. Տեղական մասնաժողովին մի հիւանդանոց կը պատրաստէ և կեդրոնական մասնաժողովին ալ մի բժիշկ ճանապարհ հանած է Կ. Պոլիսէն և յանձնառուած եղած է դեղեր ղրկել. Գիւղացիները մեծ մասով բանջարեղէններ ուտելով մահէն կազատին այժմ Ազրակի մէջ տարածուած հիւանդութեան պատճառը սերնական մնունդներ կերած լինելն է, կեդրոնական մասնաժողովը փաթաթէս (քարտոֆիլ) և կորեկ ճանապարհ հանած է դէպի Վան բաւական ժամանակ ի վեր, բայց դեռ հասած չէ, փաթաթէս և ցորեն ցանելու ժամանակը անցաւ. բայց կորեկ կարելի է դեռ ցանել 20 օրի չափ յետոյ: Թիւրքահայաստանի մէջ կանոնաւոր ճանապարհներ չը լինելու և հաղորդակցութիւններու դժարութիւնը երկրին թշուառութեան և սովի գլխաւոր պատճառներն մին եղած է. Ցմեռ ժամանակ Վանի մէջ մարդեր սովէն կը մեռնէին, երկու օր հետուն Արծկէ (Արճէկ) և Քալքանելիք (Ալշաեաց) քիչ թէ շատ ցորեն կը գտուէր, բայց չունուած ճանապարհներ չը լինելով չէր կարելի բերել: Վանի մէջ այս աստիճան աստիկ սով չէր տիրեր թէ Վանի ծովին վրա չոգեանաւներ գտնուէին. Առ այժմ մի կողմ թողուած Հայաստանի մէջ երկաթուղիներ տեսնելու երազը որ Անգլիան մեզ ցոյց կը տայ և համոզունք որ շատ մեծ բարերաղութիւն կը լինէր եթէ հայ դրամատէրներ աշխատէին գոնէ կանոնաւոր չօպէ ճանապարհներ տնել Հայաստանի մէջ. Մեծ բաներ երեցեալ, փոքր բաներն ալ կատարելու անտարբեր մնացած ենք. Վանի մասնաժողովը կեդրոնական յանձնաժողովի Կ. Պոլիսէն ղրկած հրահանգին համեմատ սերմցաւ ցորեն պէտք է որ գնէ, որպէս զի գիւղացիներուն բաժնէ առաջիկայ աշունքին ցանելու համար. Աղբունի տրոց պատճառով հարատարութիւնները կը չարունակուին դեռ.

Շատեր սկսած են պանդխտել Վանէն դէպի Կ. Պոլիս և Թուսաստանաստան. Այս երկուշաբթի օր (մայիս 19) մի մեծ կարաւան ճանապարհ ելաւ Վանէն Թիֆլիս և Կ. Պոլիս երթալու համար: Այսուհետև Վանէն Կ. Պոլիս գնացող ճանապարհորդները մեր կողմէն պիտի անցնին երթան, աւելի քանիէ Էրզրումի կողմէն, որովհետև մեր կողմի ճանապարհը աւելի կարճ է և աւելի ապահով. վտանգաւոր տեղն է զրեթէ միայն երկու օրուան ճանապարհ Ապաղայի դաշտին մէջ Բայազէթի մոտ. Մի ռուսական փոխ-հիւպատոսի, պ. կամսարականի այստեղ գտնուելը զիրացուցած է այս կերպով մեզ հետ վանցիներու հաղորդակցութիւնը. եկիմ Ապաղայի ճանապարհն ալ վտանգէն ազատ լինի, ալ այս կողմէն Էրզրումի ճանապարհով Կ. Պոլիս գնացող չը լինիր. զի Ռուսահայաստանի և Թիֆլիսի ճանապարհով կարելի է 18 օրէն երթալ Կ. Պոլիս կարաւանով և ֆուրգոնով, մինչդեռ Էրզրումի ճանապարհով կը տևէ մի ամիս. Կ. Պոլիսէն եկած լրագրողներէն կիմանանք որ Բ. Դուռը կուզէ Թրիման Հայրիկը հեռացնել Վանէն. թէ այդ բան իրաւ է և Բ. Դուռը ուզէ գործադրել, մեծ յուզում կեղծէ այստեղը. Նամանդապետ փաշան հրամանագիր ղրկեց մեր առաջնորդարան թէ այսուհետև Քրիստոնայուն ելքը (եկեղեցական խնդիր) կատարելը արգելուած է. Եկեղեցական խնդիր ասելով կատարելիքը կուզէ հասկացնել մեր ազգային հանդէսները. Մինչէ եկեղեցին խաղատեղի է որ այդպիսի անարգական բան կը գործածուի կրօնական և ազգային հանդէսներու համար. բնականապէս այդպիսի հրամաններ ողբ իրաւունքի վրա հիմնուած չեն, մեծ ազդեցութիւն չեն կրնար ունենալ. Ամենամարդասէրներն տարեդարձի հանդէսը անպատճառ պիտի կատարէ ժողովուրդը առաջիկայ կիրակի օր. միայն թէ նախորդ համակով գրածիս համեմատ ֆաչկերդիչը չը պիտի լինի, զի մեծ դժուարութիւններ երևան ելան ֆաչկերդիչի համար այս սովի ժամանակ և մի արծաթ մէճիդի (1½ բուբլի) վճարելով, ֆաչկերդիչի տոմսակ գնող չատ քիչ պիտի լինի. Միայն մուտքի տոմսակներ պիտի բաժնուին ¼ մէճիդի (35 կոպէկ) գնով և հասարիկ կէսը սովածներուն պիտի տրուի, կէսն ալ Հայրենասէր ընկերութեան Հայկազեան վարժարանին.

Այս օրեր Թիֆլիսէն մի քանի վանցի հայ երիտասարդներ վերադարձած էին իրենց հայրենիք և ճանապարհի վտանգներէ ազատ մնալու համար դէպք բերած էին իրենց հետ. Նամանդապետ փաշան այդ զէնքերը առաւ պատճառելով թէ Ռուսաստանի արքունի հրագաններ են, զորս արդելված է կրել. Պ. Կամսարականն ալ փայլէն առաւ այդ զէնքերը, ասելով որ եթէ առուտ արքունի հրագաններ են, ուրեմն ինձ կը պատկանի գրաւել և ոչ թէ ձեզ. Այսպէս ասա մինչեռ թուրքեր և քուրդեր համարձակ կը պտրտին փողոցները, խեղճ և անպաշտպան հայերու զէնքերը կը գրաւուին զանազան պատրուակներով.

Հանա

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ